

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ----- 2018թ.

N-----Ա

#### ՈՐՈՇՈՒՄ

**ՎՈՒԴՐՈ ՎԻԼՍՈՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՎՈՒԴՐՈ ՎԻԼՍՈՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Վազգեն Սարգսյանի անվան փողոցի՝ Հանրապետության հրապարակի Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնից դեպի ՀՀ արտաքին գործերի և ՀՀ արդարադատության նախարարություններ տանող հատվածը վերանվանել Վուդրո Վիլսոնի անվամբ:

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Վազգեն Սարգսյանի անվան փողոցի հարակից այգում, երևանցիների համար հայտնի որպես «Էրեբունի-Երևան 2750» շատրվաններ, Վուդրո Վիլսոնի հուշարձանը տեղադրելու մասին:

### **Նախագծի հեղինակներ՝**

Երևան քաղաքի ավագանու  
«Երկիր Ծիրանի» խմբակցության  
անդամներ՝

**Զ. Փոստանջյան**

**Մ. Խաչատրյան**

**Ս. Աղեկյան**

# ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎՈՒՂՐՈ ՎԻԼՍՈՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԵՎ ՓՈՂՈՑԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ ՄԱՍԻՆ»

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վուդրո թոմաս Վիլսոնը ծնվել է 1856 թվականի դեկտեմբերի 28-ին, ԱՄՆ-ի Վիրջինիա նահանգի Սթանթոն քաղաքում: Եղել է ԱՄՆ 28-րդ նախագահը (1913-1921 թվականներ)՝ դեմոկրատական կուսակցությունից: Խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր է (1919 թվական), պատմաբան, քաղաքագետ:

## Մարդասիրական հիմնավորում

Առաջին համաշխարհային պատերազմից հետո 1918 թվականի հունվարին՝ ԱՄՆ-ը, դառնալով հաղթող պետություններից մեկը, մասնակցել է Վերսալի հաշտության պայմանագրի կնքմանը, որտեղ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը առաջ է քաշել խաղաղության ծրագիրը՝ հայտնի 14 կետերով:

1. Բաց դիվանագիտություն:
2. Ծովերում նավագնացության բացարձակ ազատություն:
3. Առևտրի ազատություն, մաքսային արգելքների վերացում:
4. Ազգային զինված ուժերի կրճատում:
5. Գաղութային հարցերի անկանխակալ կարգավորում:
6. Գերմանիայի կողմից բռնազավթված ռուսական տարածքների ազատագրում:
7. Բելգիայի ազատագրում և պետության վերականգնում:
8. Գերմանիայի կողմից բռնազավթված ֆրանսիական տարածքների վերադարձ՝ ներառյալ Էլզաս-Լոթարինգիան:
9. Իտալիայի սահմանների ճշգրտում:
10. Ավստրո-Հունգարիայի ժողովուրդներին ինքնիշխանության տրամադրում:
11. Գերմանիայի կողմից բռնազավթված Ռումինիայի, Սերբիայի և Չեռնոգորիայի տարածքների ազատագրում:

12. Օսմանյան կայսրության թուրքական մասերի ինքնուրույն գոյություն և ազգային երկրամասերի ինքնիշխանություն և անվտանգություն: Դարդաները պետք է մշտապես բաց լինի նավերի ազատ անցումի և բոլոր ազգերի առևտրի համար՝ միջազգային երաշխիքներով:
13. Լեհաստանի անկախ պետության ստեղծում:
14. Ազգերի համընդհանուր միության (Ազգերի լիգա) ստեղծում:

Վիլսոնը Հայկական հարցի հայանպաստ լուծման և անկախ Հայաստանի հզորացմանը հետամուտ գործիչ էր: Հայ ժողովրդին Վիլսոնը հայտնի է հատկապես 1920 թվականի նոյեմբերի 22-ի՝ «ԱՄՆ նախագահի որոշումը Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի, Հայաստանի՝ դեպի ծով ելքի և հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ» Իրավարար վճռով, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետության տիտղոսն ու իրավունքները ճանաչվում էին Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի նահանգների վրա: Իրավարար վճիռը համարվում է պաշտոնական փաստաթուղթ և Վիլսոնի կողմից սահմանագծված Թուրքիայի և Հայաստանի սահմանագծի ամբողջական նկարագիրն է, նաև հանդիսանում է Միջին Արևելքում տարածաշրջանային քաղաքական քարտեզի նորովի ձևավորման հիմք:

Վուդրո Վիլսոնը մահացել է 1924 թվականի փետրվարի 3-ին Վաշինգտոնում:

### **Քաղաքական հիմնավորում**

Հայաստանի և Արցախի Հանրապետությունները, որպես ինքնիշխան պետություններ, որոնք վերականգնել են իրենց պետականությունը հայ ազգի պատմական հայրենիքի մի մասում՝ շուրջ 42 հազար քառակուսի կիլոմետր տարածքում, պարտավոր են հայ ազգին պատկանող բոլոր տարածքների վերադարձման պետական քաղաքականություն իրականացնել:

Դեռևս Թուրքիայի Հանրապետության վերահսկողության տակ գտնվող հայկական բռնազավթված տարածքների վերադարձի համար հայ ազգը պետք է իրականացնի հետևողական պետական քաղաքականություն: Մեր պատմական հայրենիքի ողջ տարածքում հայոց պետականության վերականգնման խնդրում յուրաքանչյուր հայ մարդը պարտավոր է ունենալ իր մասնակցությունը, իսկ հայկական պետական հաստատությունները, իրենց լիազորությունների շրջանակում, պարտավոր են իրականացնել ծրագրային քաղաքականություն:

1990 թվականին Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից ի վեր հայ քաղաքական կուսակցություններն ու օրվա իշխանությունները գրեթե ոչինչ չեն արել՝

ստեղծելու աշխարհի ավելի քան 100 երկրներում սփռված 10 միլիոնից ավելի հայությանը համախմբող ազգային անվտանգության գաղափարական և քաղաքական համալիր հայեցակարգ: Արդի հայկական քաղաքական միտքը՝ թե՛ Սփյուռքում, թե՛ Հայաստանի ու Արցախի Հանրապետություններում, պահանջում է համահայկական քաղաքական գաղափարի հռչակում, որը կլուսավորի դեպի հայոց քաղաքակրթության ակունքները մեր ժողովրդի վերադարձի և Միացյալ հայկական պետականության վերականգնման տեսլականը:

1920 թվականի օգոստոսի 10-ին Փարիզի Սևր արվարձանում ստորագրվեց Հաշտության պայմանագիր սուլթանական Թուրքիայի և Առաջին համաշխարհային պատերազմում հաղթած դաշնակից պետությունների միջև, համաձայն որի՝ Հայաստանին են անցնում Վանի, Էրզրումի, Բիթլիսի և Տրապիզոնի նահանգները, իսկ նշյալ նահանգներում երկու երկրների սահմանագատումը թողնվում էր ԱՄՆ որոշմանը, և Հայաստանն ու Թուրքիան համաձայնվում են ընդունել ինչպես այդ, այնպես էլ Հայաստանին դեպի ծով ելք տալու որոշումը: ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը, իր նշանակած հանձնաժողովի ուսումնասիրությունները հաշվի առնելով, նույն թվականի նոյեմբերին եվրոպական տերություններին է հանձնում իր որոշումը, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետությանը պետք է միացվեին գրեթե ողջ Էրզրումի նահանգը, Տրապիզոնի նահանգի մեծ մասը՝ ներառյալ նավահանգիստը, Վանի և Բիթլիսի նահանգների երկու երրորդը, ընդհանուր առմամբ՝ շուրջ 90 հազար քառակուսի կմ: Այդպիսով՝ Սևրի հաշտության պայմանագրով՝ Հայաստանի Հանրապետության տարածքն ընդգրկելու էր շուրջ 160 հազար քառակուսի կմ և ելք դեպի Սև ծով:

Ինչպես Սևրի պայմանագիրը, այնպես էլ դրանից բխող՝ հայ-թուրքական սահմանի վերաբերյալ ԱՄՆ նախագահի իրավարարական որոշումը, որն, ի տարբերություն Սևրի պայմանագրի, վավեր էր ստորագրման և կնքման իսկ պահից, թեև չիրագործվեցին, այնուհանդերձ, դիվանագիտական այդ փաստաթղթերը Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ազգի իրավունքների միջազգային ճանաչումն են:

Ժամանակակից հայ ազգը, ունենալով երկու մայրաքաղաք, իր քաղաքակրթական և քաղաքական դիրքորոշումը կարող է և պետք է նաև դրսևորի՝ Վուդրո Վիլսոնի անվամբ փողոց անվանակոչելով և նրա հուշարձանը տեղադրելով:

Վուդրո Վիլսոնի անվամբ փողոց անվանակոչելը և նրա հուշարձանի տեղադրումը կհանդիսանան ոչ միայն որպես երախտիքի տուրք հայ ազգի կողմից, այլ նաև մշտական հիշեցում Սևրի պայմանագրի և Վիլսոնյան Իրավարար վճռի կարևորության ու կենսունակության:

### **Իրավական հիմնավորում**

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի պահանջները՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

Հուշարձանի նախագծային ու շինարարական աշխատանքների ֆինանսավորումն առաջարկվում է իրականացնել հանրության միջոցների հաշվին՝ դրամահավաք անցկացնելու միջոցով:

Հուշարձանի կառուցման համար նախատեսվում է անցկացնել բաց մրցույթ՝ «Գնումների մասին» օրենքով նախատեսված ընթացակարգով:

### **Նախագծի հեղինակներ՝**

Երևան քաղաքի ավագանու  
«Երկիր Ծիրանի» խմբակցության  
անդամներ՝

**Ջ. Փոստանջյան**

**Մ. Խաչատրյան**

**Ս. Աղեկյան**

# ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՎՈՒԴՐՈ ՎԻԼՍՈՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԵՎ ՓՈՂՈՑԻ  
ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ  
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/  
ԿԱՍ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Վուդրո Վիլսոնի հուշարձանի տեղադրման և փողոցի անվանակոչման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

## **Նախագծի հեղինակներ՝**

Երևան քաղաքի ավագանու  
«Երկիր Ծիրանի» խմբակցության  
անդամներ՝

**Զ. Փոստանջյան**

**Մ. Խաչատրյան**

**Ս. Աղեկյան**

# ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՎՈՒՂՐՈ ՎԻԼՍՈՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԵՎ ՓՈՂՈՑԻ  
ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ  
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Վուղրո Վիլսոնի հուշարձանի տեղադրման և փողոցի անվանակոչման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

## **Նախագծի հեղինակներ՝**

Երևան քաղաքի ավագանու  
«Երկիր Ծիրանի» խմբակցության  
անդամներ՝

**Զ. Փոստանջյան**

**Մ. Խաչատրյան**

**Ս. Ադեկյան**